

Խմբագրութեան վերաբերեալ երա-  
տարակից գործընկերներու որոշու-  
եալ կանոններ

Rédaction du Journal

« ARCHALOUYCE »

Le Caire (Egypte)



Խմբագրութեան ուղղութեամբ գրութիւնք

ես չեմ տրուիր :



# ԱՐՇԱԼՈՅՍ

Կ Ի Ս Ա Շ Ա Ր Ա թ Ա թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎՐ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՏԻՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ  
Ե . ՊՈՐՏՈՍ ԵՆ

Դրամ պարտեմանոց ցանկաները  
պէտ է ուղղի կեանքի կողմէն

E. ARCHALOUYCE

Direct. - propr. du journal Arménien

ARCHALOUYCE

LE CAIRE (EGYPTE)

ԱԶԳԱՐԱՐԹԻՒՆԻՔ

Կանխիկ վճարելի են :



ԹԻՒ 405

ՔԱՆ ՓԱՐԱՑ ՈՂՁ

ԶՈՐԵՔԵԱՐԹԻ

## ԱԼԲԱՆ ՍՆԱՅ ՏԱԼԻՔ

Կրակը, սուրը, արիւնը չէր բաւեր, և  
աճա կրակէն, սուրէն աւելի մեծ աւելի  
տխուր բնաշնչում մը կամաց կամաց կ'սկսի  
իր մահաշնչով թեւեւը տարածել մեր վրայ :  
Ինչ սեւ ճակատագիր, ինչ անըմբռ-  
նելի դատախիզն :

Սուգերու մէջ, սոսկումներու լուծին  
տակ դեռ հեւացող ազգ մը, որ դարձաւ  
տառապանքներու, անհատում կ'սկսեմ  
ուրու մէջէն կրցած է քաջութիւն իր սարա-  
բազը գոյուցելուն, այսօր բնութեան թիրտ  
ոչոյթին ներքեւ՝ իսպառ կորսուելու վտան-  
դին կենթարկուի :

Կոտորածին ինչ խուլ հեղուցութիւն :  
Մեր վերջին ճգնաժամին մէջ, արիւ-  
նալի երազներէ դեռ նոր արթնցած, դեռ  
չի մոռցած սեւագոյն անցեալին յուզում-  
նալի տեսարանները, աճա դարձեալ մեր  
աչքին առեւ կը զոյգուի՝ քրիստոնէութեան  
դիմակին ներքեւ պահուող բռնութեան,  
թիրտ ոչոյթին սպառնալիքը :

Դեռ ինչ տառապանքներ յատկացու-  
ցեր եւ Աստուած այս բազմապարար ազգին :  
Իրաւունքն ուր մինչեւ հիմա անբռ-  
նարեկի կարծուած էր համայնքէն, արի-  
ստի այն ալ այսօր մարդակուլ ճիւղին  
ձեռքին մէջ խաղալիք դարձեր է իրաւունք  
մը զոր մեր արիւնով յաջողած էինք ըտ-  
նել :

Դուք դեռ հաւատարմութիւն պտայէք :  
Դուք դեռ եղբայրութիւն քարոզեցէք մար-  
դիկ, մինչդեռ անդին քրիստոնէայ պե-  
տութիւն մը, խառնակ սուր ձեռքերը  
նա՞ծ խոնարհէ՞ կը պտայ, խոնարհէ՞ ասոր  
առջեւ որ քու կորստանոց յատկանշան է :

Ո՛հ, ինչ վեհ մը քաջագործութիւն, ազգ  
մը որ հիւանդ է, ազգ մը որ բարբարո-  
սութեան ճիւղներուն տակ իր օրհասա-  
կանի ցաւերով կը տառապի, վերջապէս  
ազգ մը որ իր ետին արիւնալի պատմու-  
թիւններ թողած է՝ աչք աչքը, իր վեր-  
ջի ճգնաժամին մէջ նոյն իսկ մեծացելու  
ճիւղեր թափել, ուսուցանելու ջանքեր ընել  
թիրտ ոչոյթի միջոցով : Ինչ մեծանան ապե-  
տութիւն :

Թուրքէն աւելի բարբարոս... քուր-  
դէն աւելի ճիւղազ քրիստոնէայ, մինչեւ  
ե՞րբ պիտի շարունակես ծծել մեր արիւնը,  
արիւն մը որ սուրի կրակի մնացորդն է :

Ինչ տխուր տեսարան, մէկ կողմէն  
վարդագոյն հոգիներ, արիւններու մէջէն  
բոցերու հրատաճ քններու կը խառնեն ա-  
նէճքի կտորներ մարդկութեան ճակտին  
նետուած, միւս կողմէն կեանքի տեղոյն  
մնացորդ մը մոխիրներու մէջ դեռ կը մնայ  
հատնելու փոշիանալու դատապարտուած,  
ասորին անսպառ վշտեր կը հեւան՝ գալիս-  
հար վիրաւոր սրտեր կը քաջաւորին գայ-  
լերու ատամներուն տակ, ողբեր, ճիւղեր  
կը բարձրանան դէպի երկինք : ու ասոնցմէ  
չերձ մնացող արի մը հայութեան վերջին  
ապաւէնը, միակ միջիթարանը եղող՝ եւ

մինչեւ ցարդ անբռնաբարելի, կանգուն  
մնացող մէկ իրաւունքն ալ արեւելքի քը-  
րիստոնէից պաշտպան տէրութիւնը կը խլէ  
մեր ձեռքէն, ալ բան մնաց տալիք ան-  
գուժ ճիւղերն :

Առիթ մեր կեանքը, առիթ մեր ինչ-  
քը, հարստութիւնը, կողորոտեցիք մեզ, ա-  
ռիթ նաեւ մեր պատիւը՝ ինչ որ նուիրական  
էր մեզ համար, ինչ որ մեր սրտին ան-  
նեն մօտիկն էր, ալ ինչ կուզէք, կու-  
զէք նաեւ առեւելք մեր կրօնքը, մեր ազ-  
գութիւնը մեր լեզուս, որ այնչափ դա-  
րերէ ի վեր անվթար պահած ենք, ալ ինչ  
կուզէք մեզմէ, միթէ չի բաւեց այսչափ  
տառապանք, չի բաւեց այսչափ զոհ, ա-  
րիւնախնայ գայլեր :

Մարտիրոսութեան շրջանին մէջ նոյն  
իսկ կը շնչաւք, կ'մեծանէք մեզ մեր ընա-  
նընդամի դատաւճիռը, թողէք դեռ մեր  
արցունքները չեն սրբուած մեր աչքերէն,  
թողէք մեզ, դեռ մեր վերջերը չեն չոր-  
ցած, թողէք, դեռ մեր սրտերուն մէջէն  
չէ մարած վշտի կոկիւղներ, ալ բաւ  
է որչափ տառապանքներ մեզ գէթ դուք  
սվ անգութներ, որ քրիստոնէայ անունը  
կը կրէք, քաջեցէք ձեր նշտարակ մեր սր-  
տէն, ուրկէ վերջ կը հոսի՝ թողէք մեզ  
ինչ որ մերն է, ինչ որ մեր սրտին կը  
պատկանի, թողէք մեզ որ, գէթ մեր  
կրօնքին ազատութիւնը վայելելով՝ մեր  
ազգին անունը կը խլէ մեզնիք, ի սէր  
մարդկութեան մի խանդաղէք մեր անուշ  
յիշատակները ձեր վայրենի ու դժօրապի-  
քրեկներով, մի մեռցնէք մեր սրտի աւե-  
նէն անուշ ըզգացումները ձեր անտանելի  
խառնուցումով վերջապէս մի պղծէք այն  
կեկեղեկին, որու աւելի մի նոյն իսկ ձեր  
նախնիքները իրենց գլուխին խոնարհեցու-  
ցին : մի՛ մոռնաք ապրիլի անուշ ան-  
հուն ծառայութիւնները, որ այս դժբաղդ  
ազգը մատուցեր է ձեզ :

Ալ բաւ է, թողէք մեզ ինչ որ մեր  
սրտին կը պատկանի, ինչ կուզէք մեզմէ  
ալ բան մնաց տալիք :

ԱՅՏԱ

### ՆԱՄԱԿ ՀԱՊԵՇԻՍԱՆԷՆ

Ստրոն-Ապագա 17 Օգոստ, 1903

Միջազգային ֆլուպ... Հայ գաղութ... Լաւ-  
րան-ընթերցանութիւն... Եւր գաղութներ... Կայ-  
սերական փոփոխութիւն... Օղի և Շախմատ... Կոլի  
և Կաշտարան... Սեպտի մը... Կայսերական  
ներու :

Անցեալ կիրակի վայելուչ շքով կատար-  
ուեցաւ նորակազմ միջազգային ֆլուպի բա-  
ցումը, որոյ հիմնադիրն է Արաբիցի հայ ե-  
րիտասարդ մը Պ. Սարգիս Ազնաւորեան :  
Ետտանց զգալի եղած էր հաւաքման կեղ-  
րոնի մը պակասը բոլոր հայ եւրոպացի, յոյն,  
հնդիկ վաճառականներու որոնք զրկուած մէկ-  
ըմէկու հետ առեւտրական և անձնական յա-  
բարեբուծեմէն մեկուսացեալ կ'պարկին չ'ունե-  
նալով հաւաքման տեղ մը :  
Աւստիկ այս մեծ պակասն է որ լրացուց Պ.

Ազնաւորեան ամենամեծ ճարտարութեամբ օժ-  
տելով քաղաքը վայելուչ շէնքով մը, շքեղ քը-  
լիւպով մը, եթէ կը շնչանայ հայ երիտասար-  
դին ճարտարութիւնը և ճարտարութիւնը,  
պատճառ այն է որ շէնքերու կառուցման մա-  
սին բոլորովին կը պակասի այն ամեն զիւրու-  
թիւնները որ կան ուրիշ տեղեր. բնաւ չի կան  
առձեռն պատրաստ շինուած անիւթիւր. պէտք է  
ամեն բան հնարի ստեղծել և ի հարկին մեծա-  
մեծ ծախսեր և զոհողութիւններ ընելով ամե-  
նահեռուր վայրերէ բերել ալ ինչ որ հարկ է  
չինութեանց համար : Ասանց ընկրկելու այդ  
նիւթական դժուարութեանց առջեւ՝ յանդուգն  
նախաձեռնութեամբ վերջապէս յայտնուեցաւ իր  
ծրագրին ի գլուխ հանել Պ. Ազնաւորեան :

Ետքից օրէն սկսեալ՝ բացման հանդէսին  
ներկայ գտնուեցաւ համար, յատուկ հրաւիրա-  
գրի ուղղութեամբ էին Ֆրանսայի Անգլիոյ Ռու-  
սիոյ Իտալիոյ զեպպանտանց, բոլոր եւրոպա-  
ցի և յոյն նշանաւոր անձնաւորութեանց և  
վաճառականներուն :

Կիրակի առաւօտ ժամը 10ին կ'սկսի բաց-  
ման հանդէսը : Հապաղալիս ետագոյն դրօշները  
կը ծածանին շէնքին վրայ : Քիւրակի մեծ սրահը  
ձոր կեկեղով կ'առաւարտուած է : Արաբիկ ճակատը  
զրուած են վեհ : Մենելիք կայսեր և Կայսրուհի  
Եւրոպական պարտիւն Անգլիոյ հանդուգն թա-  
ղուհի մեծագիր կենդանագիրը և որահին մէկ  
կողմի ալ զեպպանտանց է մեր տոհմային խորհր-  
դանշանը, Մայր-Հայաստան փառաւոր զինա-  
նշանով մը : Ժամը 10ը քստորդ անցած ներս  
կը մտնէ որահին Ֆրանսական զեպպանտան  
կողմէ զինանախագահական զորակազմի և Լեւոն-  
Հիւսպատոս Մ. Բու ընկերակցութեամբ Ֆրան-  
սացի վաճառականները : Անմիջապէս ինքնա-  
շարժ նուագարան մը կ'առնէ Ֆրանսական ազ-  
գային երգը զոր բոլոր ներկաները մի քանի  
վայրկեան յոտակապ կ'աւելնորեն : Քիչ վերջը  
ներս կը մտնեն սրահէն Անգլիոյ զեպպանտան  
կողմէ Ա. Թարգման և զորակազմի Մ. Բար-  
ընկերակցութեամբ իր Ք. Թարգմանի և զե-  
պպանտան ուրիշ պաշտօնականներու, Բուսիոյ  
զեպպանտան կողմէ Ա. Բարտուղայ Մ. Ման-  
մար ընկերակցութեամբ զեպպանտան ըմբիւն  
և ուրիշ բազմութիւն հետեւորդ պաշտօնականներու :  
Հիւրանման կարգուած են ծանօթ հայ վաճա-  
ռականներէ Տիարը Տիարը Էպիսկոպոս և Գրի-  
գորիոս Պողոսեան, իսկ թարգմանի պաշտօնը  
կը կատարէ պոլսեցի նախկին ուսուցիչ մը որ  
այժմ կ'ըզգայ վաճառականութեամբ : Հիւրա-  
մեծարները հեղուցեալ կ'ընդունին պաշտօնական  
հիւրերը և կ'առաջնորդեն իրենց յատկացեալ  
տեղերը : Իտալիոյ զեպպանտան յատուկ նամակա-  
մը շնորհաւորած էր Քիւրակի հիմնադիրը և ցա-  
յայանձ էր չի կարենալ ներկայ գտնուելուն  
խոստանալով որ ինչ որ մը յատկապէս այցելելու  
Պաշտօնական անձնաւորութիւնը կը բազմին ի-  
րենց յատկացեալ տեղերը և մի քանի վայր-  
կեան տեսակցիլ վերջ փափագ կը յայտնեն ծա-  
նօթանալ Քիւրակի հիմնադիրին հետ որ իսկոյն  
ներկայանալով յարգանքով կ'ողջունէ բարձրա-  
տիման հիւրերը և իր երախտագրութեանը կը  
յայտնէ այն մեծ պատուոյն համար զոր ըրած  
են անձամբ պատասխանելով իր հրաւերին : Օ-  
տար անթութեանց ներկայացուցիչները Պ. Ազ-  
նաւորեանի այս քաղաքավարական խոսքերուն  
ի պատասխան սուքի կ'ըլլեն և շարունակաբար  
ժամկերը վեր բարձրացնելով կը խմեն սոյն  
Քանթուս հիմնադրուած յանդուգնութեանը և  
բարգաւաճմանը :

Հեղուցեալ կը հասնին յոյն հնդիկ վաճա-  
ռականները, հայ գաղթականութեան բոլոր  
անդամները ի գլուխ որոնց մեծաշուք Պողոս Պէյ  
Մարգարեան որ կուզայ բազմիւր եւրոպացի հիւ-  
րերուն մօտ :  
Թուրք հասարակութեան երեւելիներէն  
կուզան նաեւ Զաքարիա, Անաթի, Պէթիք Պէ-

յերը և Հաճի Ահմէտ, Իտալի կ'ընդունին :  
Կէս ժամու չափ կը նստին պաշտօնական  
հիւրերը, են իրենց օգնակցուր կը յայտնեն  
չէնքին շքեղութեան և սրահին վայելչականա-  
ւորման մասին : Ինչ ինչ տեղեկութիւններ կը  
հարցնեն Քիւրակի անդամակցութեան վերաբեր-  
եալ լինելիք կարգադրութեանց նկատմամբ և  
փափագ կը յայտնեն տեսնել Քիւրակի յարակից  
դահլիճները և դանազան մասերը : Թարգմանին  
և հիւրանման արեւորուն առաջնորդութեամբ շէն-  
քին բոլոր մասերը այցելել և գոհունակու-  
թիւններն, շնորհակալութիւններ կրկնել վերջ  
իրենց եղած պատիւներուն ու մեծարանքնե-  
րուն համար կը մեկնին հրաժեշտ առնելով բոլոր  
ներկաներէն :

Պաշտօնական անձնաւորութեանց մեկնելէ  
վերջ, ալ ամեն ոք ազատ զգալով ինքզինք  
պաշտօնական կաշկարուածներէ, կ'սկսին շա՛մ-  
բանեալ ցնծալից արարողութեան միտն ազգա-  
յին խորութիւն մէկ կողմ թողել հայ յոյն  
խառն կը հաւաքուին սեղաններու շուրջ և  
կ'սկսին ուրախութեանց : Մէկ սեղանին կը նա-  
խագահէ յոյն երեւելիներէ Պ. Էլիէթիէս և  
միւսին՝ Պողոս Պէյ Մարգարեան : Ետտանաւ  
հիւրերը պէս կը հոսի անգլաներուն վրայ : Եր-  
գրը բաժակաճառք մեկնելու կը յաջորդեն ու  
զեպպանտան և ուրախութեամբ :

Առաջին բաժակը կ'առաջարկուի հայոց կող-  
մէ յոյն ազգի մեծութեան և բարգաւաճման  
համար : Երկրորդ բաժակը կ'առաջարկուի յու-  
նոց կողմէ՝ հայկական պատմական մեծ խեղճի  
իրականացման համար : հարեւ երկուսեան ժամը  
6 ին կ'աւարտին բոլոր երգերը, բոլոր բաժա-  
կաճառքերը : Հաճելի և անմոռանալի ժամանցի  
մը ապաւորութեան ներքեւ հեղուցեալ բոլոր  
ներկաները հրաժեշտ կուտան Պ. Ազնաւորեանի  
յայտնելով իրենց շնորհակալութիւնները եղած  
պատիւներուն և մեծարանքններուն համար,  
զորս փոխարինելու համար յայտնող օրը դարձ-  
եալ կը համարուին Քիւրակի մէջ բոլոր հայ  
յոյն վաճառականները և իր պատիւ իրարու և  
յոյն վաճառականները և իր պատիւ իրարու և  
յոյն վաճառականները 250 շնչ գարնալ կը բա-  
նան Այս տեղ միջնակեալ պէտք է յայտնել թէ  
Եղբայրս մէջ շնչը 2 զորու արժող հասարակ  
գարնալուր հոս կ'արժէ շնչը 5 Թրակի և նոյն-  
պէս հասարակ շա՛մբանեալ շնչը 10 Թրակի Դարձ-  
եալ երգերը դարձեալ կենցաղի միջնայն ոգեւո-  
րութեամբ՝ միեւնոյն խանդավառութեամբ մի-  
այն այս անգամ միօրինակութեան շնչուլու հա-  
մար ստեղծանալով իրենց անհատական և ընդ-  
հանուր ոգեւորութեան մէջ Պ. Երեմիա Թարգմա-  
բոյս բեմ բարձրանալով սրտայոյղ շնչուրով և  
զիւրիչ պերճապատեթեանը կը խօսի հայ յոյն  
ժողովուրդներու եղբայրակցութեան վրայ և  
որտեղցոտ ծափահարութիւններով զիտեմ-  
րով կեցցենքով քանիցս կ'ընդմիջուի իւր  
պերճապատեթեանը և Այսպէս գրեթէ  
անընդհատ երկու օր կը տեսնին Քիւրակի բացման  
տեղի խրախմանութիւնները : Կարեւոր պէտքի  
մը լրացումը ուրախալ էր որ գրգիւ կ'ըլլայ  
հայ գաղութին ուրիշ ալ աւելի կարեւոր պէտքի  
մը լրացման և ուսուցումի, այն է Լաւրան -  
Ընթերցարանի մը հաստատութեան Այս առիւ-  
թուր հայերը գումարում մը կ'ունենան նախա-  
գահութեամբ Տիար Տիարը Էպիսկոպոս և միա-  
ձայնութեամբ կ'ընդունին Լաւրան - Ընթերցա-  
տան մը հաստատութեան գաղափարը և կ'որո-  
շուի ամսական բաժանորդագրութիւն մը բանալ  
բոլոր հայերու միջև և արդիւնքը յատկացնել  
սոյն գաղափարի իրագործման : Ընթերցարան  
մէջ պիտի գտնուին բացի օրակազմի և պարբե-  
րական թերթերէ՝ ազգ. և սասարգիչ նշանա-  
ւոր մասնագրաց գործերը և ինչպէս նաեւ  
պատմական աշխարհագրական անտեսական ծա-  
նօթութիւններ պարունակող նորագոյն հեղ-  
նակութիւններ : Երեք հոգիէ բազմաքանակ մաս-

Նախաժամը մը պիտի վարէ Լուսարան - Բնակարան... Գործընկերները ներկայացնելով հայ գաղ- թականութեան մարտիչները...

(Մանգեպը յարցոյ պատմ)

ԱՐՅՈՒՆՔՆԵՐ ԲԱՁԵՐԻ ԱՅԵՐԻ

Արցունքի յոյզի վշտի օր մը եւս, Ո՛ր աշխարհ եկաւ, սճգոյն դարաւար, Առաջին բառը, ա՛ր բոլոր բերնէս, Սէ՛ր եր. ո՛վ Յիսուս, սէր-Քո սիրոյ յար...

Այն օրը սեւայ, քեզ Խայիկ վրայ, Ինձ, կը մպսէիր, ժպիտդ եր յոյս, Ըսիր դու. այսի՛, զգայ ինձ սրայ, Սիրե՛ միշտ սիրե՛, քանզի սերն է յոյս...

Ու ես այդ օրէն, սիրեցի քեզ Տէ՛ր, Կանգնեցի ներսը, խորան մը յոյզի, Սակաւն իմանալ հոն նայե՛, քե՛ ինչե՛ր, Կը միտն Աստուած, ա՛յ զքս ինձի...

Նայե՛, Տէ՛ր, նայե՛, հոն հասնում մը սէր Հոգոյս պղծում, յոյս կը հեռայ, Այ բա՛ ե, նայե՛, զի Խայիկ ստրել, Գիշերներուն յոյս, մեռնողը եղայ...

Ո՛ր, ինչե՛ր կ'զգամ. ներսս ա՛յ քս քս յարգի, ներսս, շիրտ կը հոսի, Նայե՛, ա՛ր ինձ, իստ վերսեր բացում, Անե՛ն օր մաս մաս հոգիս կը սակի...

Նայե՛ սէր, նայե՛, ինչպէս ծանուցիր Տէ՛րներ իմ ներսս, ոն միշտ կարնան, Գիշեր մը ինձի զգայ ոտուցի, Որպէս զի հասնիմ խոնկի մը նման...

Հիմա, ո՛ն, ե՛ս ա՛յ, այդ Խայիկ գամում, Բեզի պէս սճգոյն, յոյս կը հեռայ, Ինձ օ՛ր մը միտն յարցիր, ո՛վ Աստուած, Սակաւն նայե՛ ես անե՛ն օր կոչում...

ԱՐՇԱԼՈՅՍ ՄՍՐԸՆԱՆ 15 Սեպտ. 908

ԱՂԻՄԱՐՈՒԹԻՒՆ

Պարտաւորեալն եւ Իտալիան լեզուաց ինչ նաև Չեռապոլի մասնաւոր զանաւ աւանդելու համար վիսայեալ Ուսուցչուհի մը պատրաստ կայ. կը գտախօսէ Գաշնակի զանաւ ալ սկիզբ նակներու համար: Գիտի Արշալոյսի Տնօրինութեան:

ԹԵՐԹՕՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ (12)

ՍԵՒ ԱԴԱՄԱՆԴԸ Հեղինակ ԲԻՆՈՍԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ Ի. ՏԱՆԷԼ-ՏԸ-ՇԱՆԹՈՎԵՐ

Ինչպէս կը յիշէր Ռիֆֆէյ. Տանիէլ ար Շանթովէր կարգէ զուր կայտառ երկրաստոր մ'էր, եւ ինչ երբէք համարձակ չէր անոր. Կա կերտակայէր թէ՛ զեռ աչքին առջեւ է այն աւանդները, երբ զարանեակ կուգար. մեծ, ու ժող եւ սքանչելի կողովով, ու անկեղծութեամբ եւ աղնուութեամբ լի: Ես իր աչքին առջեւ կը թերէր անոր գեղեցիկ զեմքը, սիրուն, թափ եւ սպառնից, անոր կապոյտ աչքերը՝ պողպատաւիկ նայածքով, անոր գեղին ու սիրուն մօրուքը ու զեպի վեր տնկուած խոտոգաւար (փը-րիզի) մազերը եւ կտրուկ ու ծագրաւից խօսքը... Երկրորդ յորիկը հասնելով քիչ մը զող- զովուն արտասանեց: « Անգամ մը անոր քիչն ըսնելը կը բաւէ... յառաջ. Ռիֆֆէյ, ստատմանը հարկ չը...

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՐԱՓՆԵՐՈՒ ԽՆԻՒՐԸ

Կ. Պօլսէն կը ծանուցանեն թէ՛ Քրան- սական դեպքանը Նօթա մը զրկած է Ք. Գրան, որով 50 հազար սուլայ վնասահա- տուցում կը պահանջէ Կ. Պօլսոյ քարափ- ներու ընկերութեան համար, որուն հան- զէպ կ'ընէ, Կառավարութեան կողմէ յան- ձքն առնուած պայմանաւորեալ պարտաւո- րութիւնները անթերի կատարուած չեն: Այս նօթան կը պարունակէ միանգա- մայն թէ՛ գոհացում չ'արուելու պահանջ՝ քարափներու ընկերութիւնը, իր լիազօրու- թիւնը, իրաւունքը եւ անունը կարենալ պահպանելու վիճակին մէջ պիտի դրուի:

ՊԵՐՈՒԹԻ ԴԵՊՐԸ

Հետեւեալ մանրամասնութիւնները կը հրատարակեն տեղական թերթերը, Պէրու- թի մէջ պատահած գէպքերուն առթիւ:

Կուրիս սկզբնապատճառը եղած է, Մարտիայի թաղէն քրիստոնէայ աղջիկ մը առեւանդուած ըլլալուն համար սպաննուած թուրք զինուոր մը:

Այս գէպքը՝ արգէն քրիստոնէաները եւ մասնաւորապէս իրարու դէմ գոգուած էր եւ կիրակի առաւ մը մասնաւորապէս յարձակեցան Մարտիայ թաղին վրայ, որ քան հոգի կորնցնելով ետ քաշուցանեւ յարձակեցան Ռա-Էլ-Նապար թաղին վրայ, որուն քրիստոնէաները յանկարծակի գաղով 18ի չափ մեռեալներ ունեցան:

Օրը կիրակի ըլլալուն համար Հիւպա- տոնները ամենքն ալ բացակայ էին, եւ մի- այն երեկոյնի կարելի եղաւ լուր զրկել ի- րենց, որ հետեւեալ օրը հաւաքուցանու:

Այդ միջոցներուն շարքերը նոր ի նո- ըրոյ սկսան եւ օտար Հիւպատոնները միա- ձայն որոշումը վաղիկ հարցուցին թէ՛ խա- զազութիւնը պիտի կրնայ վերահաստատել: Վաղիկ բնականաբար միտակամ պատասխան պիտի տար, աւար վրայ մէկ քանի Հիւպա- տոններ առաջարկ ըրին եւ Ամբիլեան նա- լատուրիին նաւաղները ցտաբ հանել, բայց մերժուելով այս առաջարկութիւնը, հարկ դատուեցաւ Կ. Պօլսոյ հեռագրելով Վաղիկի հրատարակուած պահանջը:

Հետեւեալ օրը, երեկոյնի թուրքերը զարձեալ յարձակած են քրիստոնէաց թա- զերուն վրայ, սակայն այս վերջինները ար- զէն պէտք եղած նախազգուշութիւնները ձեռք առած են եղեր, այդ յարձակման պատշաճ եղանակաւ դիմադրելու համար: Թէպէտեւ որոշ կերպով յայտնի չէ թէ՛ որչափ մեռեալներ կան, բայց ատոնց թիւը 50 էն պակաս ըլլալու չէ՛ շատ մը վիրաւոր- ակներէ զատ:

Պարտաւորելի շարքերը գործուած են շարքի միջոցին եւ Յոյն քահանայ մը Ս. Մի-

կայ. քու բողոք խաղաղիկ եղած է. յառաջ ու- ընեն:

Մեծ միտքով մը ըսողներ թիւ 17 սենեա- կին զուրը եւ ծանցումը ա՛ մտէ՛ք օ պատաս- խանող ձայնը, որ տուղուընէ շատ աւելի խիստ եւ յոտակ էր, եւ այդ ձայնին հնչումը զինքը զողպուց թէ՛ եւ՛ բայց ապահովեցաւ ինքնի- րեն մտածելով: « Սկուտ մը անգամ չունի... այն մարդի- կը որ զրամ չունին, երբէք համարձակ չեն կըր- նար ըլլար... հազարնոց զբամառատով մը պի- տի հանդարտեցնել իր բարկութեան առաջին յանթերը... Ենթադրելով որ համարձակի զէն ընդունելութիւնը մը ընել ինձ իս: — Իտալիայ, Սիրիայի Պ. ար Շանթովէր: Կախիթ ներս մտած եւ շնորհալի եղանա- կաւ մը կը քրտէր Տանիէլը, որ փոխանակ ու- թի ելլելու, Կախիթար տեսնելով՝ աւելի եւս տե- զուարտեցաւ իր թիկնաթոռին մէջ: — Ո՛ր, գու՛ք էք. ո՛ր ստատման ձեռքի միջոցն հոս առաջնորդեց: Հոսկաւակ այն առճամարնու եղանակին, որով Տանիէլ զինքը կընդունէր, Կախիթ անոր բարկեղանակի միջոց մը ուղղեց: — Կը տեսնեմ թէ՛ զրկելով զբողոք էք. սի- րիայի Պ. ար Շանթովէր, ըսաւ նա նստելով, ձեռք նստելով աւարտեցէ՛ք. որ յետոյ տեսակցինք: — Աղէ՛կ, ըսաւ Տանիէլ:

չէլ եկեղեցոյ խորանին վրայ հանուելով մորթուած է:

Չարչարանքի եւ խոչտանգանաց ենթար- կուած կիներու եւ ողբոյց պատմութիւնը սարսափ կազդէ լսողին:

Կատարուած քննութիւններէն ա՛յնպէս կերեայ թէ՛ շարքին բոլոր պատասխանա- տուութիւնը կառավարութեան վրայ կը ծանրանայ:

Ծ. Խ. — Ո՛ր մէկ շարքին պատասխա- նատուութիւնը թուրք կառավարութեանց աշակերտութեամբ չէ կատարուած. սակայն այսպիսի պատասխանատուութեան մը պա- տասխանառու ո՛վ պիտի ըլլայ: Ահա բուն հարցը որ մտքերը յոգնեցնելու ընդթ մը ունի:

ՇՆՈՐՀՍԿԱԼԻՐ

Այրի Տիկին Լուսիա Փիլիպպոսեան, Տէր եւ Տիկին Տիրան Փիլիպպոսեան. Օրիորդ Վառվառ, Սթիֆիլիկ եւ Ալինա Փիլիպպոսեան. Անտոն պէյ Փիլիպպոսեան, «Արշա- լոյս» ի միջոցաւ իրենց անհուն շնորհակա- լեքը կը յայտնեն ամեն անոնց՝ որոնք ի- րենց որդոյն, եղբոր տղայի եւ եղբոր- որդոյն հանգուցեալ:

ՏԻԱՐ ՊՈՂՈՍ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆԻ

յուզարկուորութեան առթիւ Երկուշաբթի օրը ներկայ դառնեցան եւ իրենց ցաւակ- ցութիւնը արտայայտեցին:

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հեռագրական գործակալութիւնը Մա- կեղանի կայութեան մասին հետեւեալ լուրերը կը հաղորդեն:

Սօֆիա 11 Սեպտեմբեր. — Մակեղա- նիայ թուրք պաշտօնատարները յայտնա- պէս կը ծաղրեն այն գաղափարը թէ՛ եւ- ըրպական միջամտութիւն մը կրնայ տեղի ունենալ. Այն պարագային, կ'ըսեն, յորում զինու զօրութեամբ Եւրոպական միջամտու- թիւն մը տեղի ունենայ, պիտի այրեն, պի- տի քանդեն, եւ անմիջապէս պիտի սպան- նեն ամեն որ, եւ յափշտակչիներուն ուրիշ բան չ'պիտի թողուն, բայց միայն անա- պատ մը:

Մակեղանական գօթիքները նօթա մը զրկած են մեծ տէրութեանց, զանոնք պա- տասխանատու բռնիկով ապստամբներու վրիժառութեանց հանդէպ թուրքերու գոր- ծած խժգժութեանց համար:

Կ. Պօլսոյ 11 Սեպտ. — Սուլթանը իրատե- ով մը հրամայեց նորոգել կամ վերաշինել Արքիանուպոլսոյ, Չաթագձաի, Էրզրումի եւ

Երբ այս վերջինը նամակը լրացուց, Կա- լիսթ սակաւ ինչ մօտեցաւ անոր, որպէսզի կա- ընայ կարգաւ այն հասցէն, զոր Տանիէլ գրեց նամակին վրայ. ու երբ Մարտիայ Տէրոյ բա- ռեր տեսաւ, ինքնիւրեւ ըսաւ. « Լա՛ւ. մեր գործը զիւրացած է ուրեմն: »

Սակայն միւս կողմէ աղէկ մը սերտելով Տանիէլի կացութիւնը, զայն առաջու ընէ աւելի անտրիւ եւ զօրեղ կը գտնէր. ձեռքերը եւ զէմ- քը արեւէն սեցած էին. անոր աղուամաղ մօ- րուքը եւ մազերը աւելի խարտաշ կերեւէին արեւակէ զէմքին վրայ. եւ զիւրին էր զուշա- կիլ թէ՛ նա շատ աւելի վշտակրած ըլլալու էր: Տանիէլ հանդարտօրէն իր նամակը գոցե- լով, ըսաւ:

— Հիմակ ձեռք տրամադրութեան տակ եմ, Ռիֆֆէ հազարով քանի մը անկապ խօս- քեր չ'պրտել յետոյ Պ. ար Շանթովէրը տեսնե- լէն իր զգացած ուրախութեանը մասին, յորեք թէ՛ միշտ անձնուէր եւ անկեղծ բարկամ մը եղած է՝ անոր... — Որովհետեւ ձեռք անձնաթ չէ, Սիրիլի Պ. ար Շանթովէր, թէ ինչ ետադրով կը պաշա- պանէի ձեզ, երբ Պ. Լարտիւնուա... — Իրա՛ւ իրա՛ւ. պատեց անոր Տանիէլ. Հալից հասնելուս պէս երբ ձեզ հոս կը գտնեմ, պատճառը իմ խորթ հայրս ըլլալու է, որ իմ մասին յանձնարարութիւններ ըրած է ձեզի

Վաստորի ամբողջութիւնները Ուրիշ իրատեղով մը, Սուլթանը կը հաւանի Օսմանեան հան- ըային պարտուց միացման:

Սօֆիա 11 Սեպտ. — Առաջին նախարար Պ. Բէթթօֆ, պաշտօնապէս զեկուցած է մեծ տէրութեանց թէ՛ իրենք եթէ Մակեղա- նիայ մէջ ի գործ դրուած թրքական վաչ- քագութեանց չափ մը չ'գնեն, Պուլկարիս ի պահանջել հարկին մէկ կողմ պիտի թու- ղու իր բուն չեղքը գիրքը:

Արքիանուպոլսէն ստացուած լուրերուն նայելով, թուրքերը այն պեղի շիրթու- թեանց առջևը առնելու համար նոյն բանը կընեն, ինչ որ ըրին Մակեղանիայ մէջ:

Կրտսէ թէ՛ Աւստրիական կառավարու- թիւնը գրուած է Պուլկարիոյ կողմէ ապա- պրուած 1,000,000 փոխաւճաները:

Սուլթանի 11 Սեպտ. — Պաշտօնապէս կը ծանուցուի թէ՛ Հիլիզուրթի օրը Ռէսմի մէջ տեղի ունեցած պատերազմին առնել 103 Պուլկարիոյ սպաննուած են:

Իտալիոյ 11 Սեպտ. — Չորս պատերազ- մական նուեր հրաման ստացած են պատ- րաստ դնուիլ, զէպի արեւելք մեկնելու համար:

Լոնտոն 11 Սեպտ. — Ուղեւորիկն ստու- ցուած Հիւպատոսական տեղեկագիր մը կը ծանուցանէ թէ՛ 3000 վառարաններ Բա- սթօնի հանուէլէ յետոյ արէ անցուած են:

Կ. Պօլսոյ 12 Սեպտ. — Արքիանուպոլսոյ վրայէ թիւն պատկանող Կիւմուլէի նայի եր- կաթիւ զուր դէմ վրայ տնտեսի ժողով մը տեղի ունեցաւ եւ բազմաթիւ անձինք վի- թարուեցան:

Լոնտոն 13 Սեպտ. — Սօֆիայէն կը զե- կուցանեն թէ՛ նախ արարութիւնը որոշած է Առաջին եւ Երկրորդ զօրաբաժինները շար- ժուն վիճակի մէջ գնել, Սօֆիայի եւ Փիլիպո- պոլսոյ իրենց յատկացեալ տեղերուն հա- մար:

Սօֆիա 14 Սեպտ. — Կառավարութիւնը կը պահանջէ մեծ տէրութիւններէն Ք. քրան օրինաւորապէս զեկուցանել որ Պուլկարիե- րուն Մակեղանիայէն արտաքսուել, ինչպէս նաև Պուլկար սահմանադրուած վրայ իր զօ- րախումբներուն կեդրոնացումը դադարեցնե- ինքնապէս պարտապիւն մէջ իշխան Ֆերտի- նանտի կառավարութիւնը ըստ պէտք եւ- ղած միջոցները ձեռք պիտի առնէ զուշա- նալու համար սպաննալով վտանգէն:

Լոնտոն 14 Սեպտ. — Մեծն Բրիտանիոյ միասնային եւ Աւստրիոյ մէջ հանրային կար- ծիքը չարաբանց յուշուած է Մակեղանա- կան կոտորածներու մասին անկողմնակալ աղբիւրներէ առնուած պատմութիւնները լսելով, որոնց մէջ թուրք զօրախումբերը յանցարար կը նկատուին:

Բարիկ 10 Սեպտ. — Կ. Պօլսէն կը ծա- նուցանեն թէ՛ Բ. դուրը բոլոր եւրոպական լրագրող թղթակիցներուն հրամայած է Մա- կեղանիայէն դուրս ելլել:

... զոր օրինակ, կուգեմ գիտնալ թէ՛ նա ինչ- պէս դիտեցած է իմ վերադարձս... բոլոր, չ'ուս խօսեցէ՛ք, ես քիչ մը չըմտապաշտու պէտք ու- նիս՝ Յարանայի գեղեցիկութիւնները ճաշակելու համար. օ՛ն ուրեմն:

Կախիթ չ'չփռեցաւ Տանիէլի տմարդի չեղ- տերէն, բայց աւելի ուշադրութեամբ մը քննե- լով անեակին շար կողմը, յանկարծակի եկաւ, նոյն չըստորութիւն արտայայտող բան մը չը գտնելով, անեակին մէկ անկունը ճամբորդի գեղեցիկ պայուսակ մը գրուած էր եւ անոր վը- բայ քուսակի պիտեան (necessaire) մը, որուն բովանդակած առարկաները յորտովին արժանի է եւ վրայէն էին. անկողնու վարի կողմը ճամ- բորդութեան հիանալի ծածկոց մը կար. վերջա- պէս, Տանիէլ ասոնց յարմարող ա՛յնպիսի պեղ- ճութեամբ մը հաղուած էր, որը ժամանակաւ Բարիկեան պնտմոնտերուն ա՛նհուն շնորհաշն- քերակալացող շնորհուն մեռնաշնորհն էր:

« Պէտք է մէկ քանի քննող արտաքններ մէջ տեղ գնել » մտազնայեալ կալիւթ: Հազար քրանցողներու դերին մասին իր ստածած յոյսերը ի գրեւ կայն. ուստի փոխանակ զրամի խօստումով իր խողը սկսելու, կեղծա- նոյնքէն ըսաւ: — Ներքե՛ք, Պարոն, դուք զիս ընդհան- ցիք ա՛յն տանի, երբ իմ բարկաւորութեան վը- բայ կը խօսէի. թոյլ տուէ՛ք ինձ յայտարարեմ



